



**ՕՊԵՐԱՏԻՎ-ՅԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆՈՐՄԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ՄԵԿԱՔԱՆՄԱՆ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ***

ՀՏԴ 343.1

DOI: 10.52063/25792652-2024.3.22-9

ՄԻԼԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ վերաքննիչ հալակոռուպցիոն դատարանի դատավորի օգնական,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

milena.hayrapetyan0411@gmail.com

ORCID: 0009-0000-2241-0295

**Ներկայացվող հոդվածի նպատակն է նպաստել հոդվածում քննարկվող
որոշակի հարցերի շուրջ միասնական պրակտիկա ձևավորելուն:**

Վերլուծվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ միայն օպերատիվ
տվյալի հիման վրա օպերատիվ-հետախուզական գործունեության միջնոր-
դություն ներկայացնելը, օպերատիվ-հետախուզական գործունեության
արդյունքում ձեռք բերված տվյալների ոչնչացումը:

Քննարկվել է նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն
իրականացնելու միջնորդություն ներկայացնելու համար պատշաճ սուբյեկտի
հարցը:

Ուսումնասիրությունը կատարվել է սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա,
ձևական-տրամաբանական, համեմատաիրավական մեթոդների կիրառմամբ:

Անդրադառնալով միայն օպերատիվ տվյալի հիման վրա միջնորդություն
ներկայացնելուն՝ արձանագրել ենք, որ նշվածն ընդունելի չէ, սակայն պետք է
հաշվի առնել նաև տվյալ փուլում գործիքակազմի սակավությունը:
Անդրադառնալով միջնորդություն ներկայացնող սուբյեկտի խնդրին՝ կարծում
ենք, որ ՀՀ ԱԱԾ մարզային վարչության պետն էլ կարող է համապատասխան
միջնորդությամբ հանդես գալ:

Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բեր-
ված տվյալների ոչնչացման մասով կարծում ենք, որ «Ապօրինի ծագում
ունեցող գույքի բռնագանձման» մասին օրենքում անհրաժեշտ է լրացում
կատարել:

Անդրադարձել ենք նաև «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախու-
զական միջոցառում իրականացնելու եղանակների վերաբերյալ առաջացող
խնդրին:

Հիմնաբաներ՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն, պատշաճ
սուբյեկտ, օպերատիվ տվյալ, արտաքին դիտում, ապօրինի, տեղեկանք,
արձանագրություն:

* Հոդվածը ներկայացվել է 09.08.2024թ., գրախոսվել՝ 18.08.2024թ., տպագրության
ընդունվել՝ 31.10.2024թ.:

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Հանցավորության դեմ պայքարի արդյունավետ իրականացման տեսանկյունից՝ հանցագործությունների բացահայտման, կանխման և խափանման նպատակով առաջնային նշանակություն ունի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը:

Միշտ չէ, որ նպատակն արդարացնում է միջոցները. այն կարող է արդարացնել միջոցները, եթե միջոցների հիմքը լինի կայուն, հստակ, իրավական և հենց այս նպատակով էլ թեման ընտրվել է, որպեսզի նպատակին հասնող միջոցների հիմքերում առկա խնդիրները վեր հանվեն, և տրվեն լրացուցիչ լուծումներ:

Ներկայացվող հոդվածի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարգավորող նորմերի ընկալման և մեկնաբանման առնչվող պրակտիկայում առաջ են գալիս որոշակի խնդիրներ, որոնք տարբեր կերպ են մեկնաբանվում և արդյունքում հանգեցնում տարրնկալման:

Օպերատիվ-հետախուզական գործունեությանն առնչվող պրակտիկայում հանդիպող խնդիրները բավականին շատ են, սակայն ելնելով աշխատանքի սեղմությունից՝ անդրադառնալու ենք հետևյալ հիմնական խնդիրներին՝

1. օպերատիվ-հետախուզական գործունեության միջնորդություն ներկայացնելու համար հիմք հանդիսացող սովյալներ,

2. օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու միջնորդություն ներկայացնելու սուբյեկտ,

3. օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված սովյալների ոչնչացում,

4. «արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու եղանակներով պայմանավորված խնդիրներ:

Աշխատանքի օբյեկտը օպերատիվ-հետախուզական գործունեության պատճառով առաջացող հասարակական հարաբերություններն են:

Տեսական հիմունքներ: Ուսումնասիրությունը կատարվել է ժամանակի արդիական մեթոդների օգնությամբ, ինչպիսիք են՝ տրամաբանական մեթոդներից՝ անալիզը, սինթեզը, ինդուկցիան, դեդուկցիան և հատուկ մեթոդներից՝ ձևական-տրամաբանականը, համեմատաիրավականը:

Արդյունք: Աշխատանքի վերջնարդյունքում կտրվեն քննարկված խնդիրների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ և լուծումներ, որոնք կարող են նպաստել միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելուն:

Օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարգավորող նորմերի ընկալման և մեկնաբանման որոշ հիմնախնդիրներ

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ժամանակ պրակտիկայում առաջացող խնդիրներից առաջինը, որին ցանկանում ենք անդրադառնալ, հետևյալն է՝ արդյոք **օպերատիվ տեղեկությունը** կարո՞ղ է հիմք դառնալ անձի սահմանադրական և կոնվենցիոն իրավունքը սահմանափակելու համար:

«Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ առերևույթ առկա են հիմքեր՝ կասկածելու, որ անձը, որի նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն և այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն

օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը ողջամտորեն անհնարին է (Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենք, 31-րդ հոդված, 4-րդ մաս):

ՀՀ սահմանադրական դատարանը 2020 թվականի ապրիլի 28-ի թիվ ՍԴՈ-1526 որոշմամբ արձանագրել է. «(...) Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականությունն են: Այդպիսով՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, ինչը միաժամանակ ենթադրում է անձի և պետության միջև հարաբերությունների և, մասնավորապես, անձանց սուբյեկտիվ իրավունքների, այդ թվում՝ մասնավոր հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքի իրացման շրջանակների և հնարավոր սահմանափակումների հստակ օրենսդրական կարգավորում: (...)»

Հաղորդակցության ազատությունը՝ որպես անձի հիմնարար իրավունք, երաշխավորված է նաև միջազգային-իրավական փաստաթղթերով: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող ենթարկվել իր անձնական ու ընտանեկան կյանքում կամայական միջամտության, իր տան, իր սամակագրության կամ իր պատվի ու հեղինակության նկատմամբ կամայական ոտնձգությունների: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքի պաշտպանության իրավունք»: (...) Սահմանադրական դատարանն իր արտահայտած իրավական դիրքորոշումներում կարևորել է հաղորդակցության ազատության՝ որպես հիմնարար իրավունքի, երաշխավորման դերն ու նշանակությունը պետության և անհատի փոխհարաբերության ժողովրդավարական և իրավական բովանդակության ամրապնդման և հետագա զարգացման հարցում, մասնավորապես շեշտելով, որ այդ իրավունքի երաշխավորումը կարևոր է նախ՝ անձին պետական իշխանության մարմինների կողմից նրա անձնական և ընտանեկան կյանքին անհարկի միջամտությունից պաշտպանելու նպատակով, այդ իրավունքի սահմանափակումը թույլատրելի է երեք համաժամանակյա նախապայմանի առկայության պայմաններում.

ա/ օրենքով սահմանված դեպքերում,

բ/ օրենքով սահմանված կարգով,

գ/ դատարանի որոշմամբ (ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴՈ-926 որոշումը, ՀՀ Սահմանադրություն, 2015): (...)»

Մարդու մասնավոր կյանք ներխուժումը ոչ միայն պետք է պատասխանի հասարակության պահանջներին, այլ նաև հետապնդվող նպատակին, համամասն /համարժեք/ լինի այդ նպատակին: Համաչափության պահանջն ունի երկու տեսանկյուն, առաջինը՝ պետք է ողջամիտ համապատասխանություն լինի հետապնդվող նպատակի և դրան հասնելու համար կիրառվող միջոցների միջև, և երկրորդ՝ պետք է ողջամիտ հավասարակշռություն լինի հանրային ընդհանուր շահերի և առանձին՝ մարդու իրավունքների պաշտպանության միջև:

Համաչափության պահանջի բավարարման ուղղված հիմնավորման բնույթը կախված պետք է լինի ինչպես միջամտության տեսակից, այնպես էլ այն նպատակից, որը նա հետապնդում է: Այնտեղ, որտեղ միջամտությունն ունի բացառապես ազդեցիվ բնույթ, հիմնավորումը պետք է լինի խիստ հստակ:

«Կլասսն ընդդեմ Գերմանիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) նշել է. «Ոստիկանական պետությանը բնորոշ՝ մարդու նկատմամբ գաղտնի դիտում կատարելու իրավունքը, Եվրոպական

կոնվենցիայի իմաստով ընդունելի է միայն այն աստիճան, որում այդ իրավունքի իրացումը խիստ անհրաժեշտ է ժողովրդավարական ինստիտուտների պաշտպանության համար»: Մյուս կողմից՝ ՄԻԵԴ-ը նույնպես ընդունում է, որ կազմակերպված հանցագործության, ահաբեկչության կամ լուստության կողմից ժողովրդավարական հասարակության համար ստեղծվող լուրջ սպառնալիքները կարող են ծնել մարդու մասնավոր կյանք բարձր մակարդակի միջամտության անհրաժեշտություն և հանգեցնել այսպես կոչված «անցանկալի» տարրերի նկատմամբ գաղտնի դիտումների՝ իրավագործության շրջանակներում (Կլասս ընդդեմ Գերմանիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը, գանգատ 5029/71):

«Բիկովն ընդդեմ Ռուսաստանի» գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ եթե օրենքի կատարումը կարող է հանգեցնել կամայականության, ապա այն անհամատեղելի կլինի օրինականության պայմանի հետ (տե՛ս Բիկովն ընդդեմ Ռուսաստանի գործով մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը, գանգատ 4378/02):

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, որ օպերատիվ տվյալն ինքնին չի կարող հիմք լինել անձի նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու համար:

Մեր կարծիքով՝ նույնիսկ օպերատիվ տվյալը պետք է որոշ չափով լինի որոշակիացված, որ թույլ տրվի դրա հիման վրա անձի նկատմամբ օպերատիվ հետախուզական միջոցառում իրականացնել:

Առաջարկում ենք՝ օպերատիվ տվյալը նախ և առաջ համապատասխան մարմինների կողմից ստուգման ենթարկվի այնքանով, որքանով դա հնարավոր է, այնուհետև՝ օպերատիվ տվյալը հաստատելու համար կատարվեն բոլոր հնարավոր միջոցառումները, որից հետո միայն հաստատելով այլ եղանակի անհնարինությունը և վերջինս ապացուցելով՝ հնարավոր լինի միջնորդություն ներկայացնել օպերատիվ հետախուզական միջոցառում իրականացնելու վերաբերյալ:

Օպերատիվ տվյալի ստուգումը կարող է կատարվել, օրինակ, օպերատիվ հարցում կամ արտաքին դիտում օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում:

Ընդ որում, կարող է կարծիք ձևավորվել այն մասին՝ չէ՞ որ ստուգման արդյունքում ստացվածն էլ է հանդիսանում օպերատիվ տվյալ, սակայն այս մասով կարծում ենք, որ չնայած դա էլ է օպերատիվ տվյալ իր բնույթով, սակայն հավաստիության տեսանկյունից ամրապնդում է սկզբնապես ստացված տվյալի արժանահավատությունը:

Այս մասով ավելորդ չէ նաև նշել, որ օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության մեջ նշվում է, որ «*եթե խոսքը փաստացի տվյալների մասին է, ապա դրանք պետք է համապատասխանեն օբյեկտիվ իրականությանը և չեն կարող կասկածներ հարուցել դրանց հավաստիության տեսանկյունից: Այնուամենայնիվ, այս գործունեության ոչ բոլոր արդյունքները միշտ չէ, որ կարող են վստահելի ճանաչվել, քանի որ դրանք պետք է ստուգվեն այլ տվյալների օգնությամբ, և միայն դրանց ամբողջականությամբ կարելի է պնդել, որ դրանք բավարար չափով հավանականությամբ օբյեկտիվ են և հավաստի»* (Goryainov K.K., Ovchinskii V.S., Sinilov G.K. (eds.) (2014) *Teoriya operativno-rozysknoi deyatelnosti [Theory of operational-search activities]*. Moscow: INFRA-M Publ.):

Այսպիսով՝ արձանագրում ենք, որ միայն օպերատիվ տվյալի հիման վրա անձի իրավունքների last resort եղանակով միջամտությունը անընդունելի է, և օրենսդրորեն հստակ պետք է արձանագրել, որ օպերատիվ տվյալը չի կարող հիմք հանդիսանալ անձի իրավունքների միջամտության:

Կարծում ենք, որ յուրաքանչյուր պարագայում հարցին պետք է մոտենալ ոչ թե թվաբանական, այլ բովանդակային առումով և գնահատել օպերատիվ տվյալի

ստուգմանն ուղղված գործողությունների արդյունքում տվյալն այդ եղանակով ստուգելու հնարավորության ողջամտությունը:

Ընդ որում, ասվածի համատեքստում անդրադառնալով Վճռաբեկ դատարանի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 15-ին կայացված թիվ 48/10.06.2021 և 2024 թվականի մարտի 21-ին կայացված թիվ 24/01.06.2021 որոշումներով արտահայտված այն դիրքորոշմանը, որ միայն օպերատիվ աղբյուրից ստացված տեղեկանքը կամ տեղեկանքի քաղվածքը բավարար չէ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու միջնորդությունը բավարարելու համար՝ կարծում ենք, որ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված և կոնկրետ գործի փաստերի վրա հիմնված որոշումները կիրառելի են լինում այնքանով, որքանով գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները նույնական են լինում:

Այսպես, պրակտիկայում շատ են դեպքերը, երբ միջնորդությանը կից ներկայացվում է արձանագրություն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացված լինելու վերաբերյալ և պաշտպանական կողմը վկայակոչելով վերոշարադրյալ որոշումները՝ գտնում է, որ միայն տվյալ արձանագրությունը բավարար չէր ներկայացված միջնորդությունը բավարարելու համար:

Կարծում ենք, որ խոսքը տվյալ պարագայում միայն եզրութաբանական իմաստի մեջ չէ, այլ բովանդակության, քանի որ մեկ այլ դեպք է, երբ դատարան է ներկայացվում միայն օպերատիվ աղբյուրից ստացված տեղեկատվության մասին տեղեկանքի քաղվածք կամ տեղեկանք, իսկ մեկ այլ դեպք է, երբ դատարան է ներկայացվում արձանագրություն՝ կատարված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների վերաբերյալ, որոնք բովանդակային առումով հստակ տարբերություն ունեն միմյանցից և չեն կարող նույնանալ:

Հարկ է նաև նկատի ունենալ, որ մինչև նախնական քննության սկսվելը անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման համար օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի գործիքակազմը սահմանափակ է՝ ի համեմատ այն իրավիճակների, երբ արդեն իրականացվում է հետաքննություն կամ նախաքննություն, քանի որ դրանց իրականացման ընթացքում գործով անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման համար ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված է ավելի լայն գործիքակազմ: Բացի այդ՝ մինչև հետաքննություն կամ նախաքննություն իրականացնելը դատարանի թույլտվությամբ կատարվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացվում են սակավ տեղեկատվության առկայության պայմաններում, որոնց նպատակն է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը և կանխումը, հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը, այսինքն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման փաստական հիմքերի ապացուցողական շեմը նվազ է:

Վերոշարադրյալ արդյունքում փաստում ենք, որ յուրաքանչյուր անգամ պետք է գնահատվի կցված փաստաթղթի բովանդակությունը՝ որակական առումով:

2. Հաջորդ հարցը, որին ուզում ենք անդրադառնալ, վերջերս արդի դարձած և բարձրաձայնվող հարցերից վերաբերում է համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կամ դրանց ժամկետի երկարաձգման համար դատարանի թույլտվությունը ստանալու համար միջնորդություն ներկայացնող պատշաճ սուբյեկտի հետ կապված հարցին:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կամ դրանց ժամկետի երկարաձգման համար դատարանի թույլտվությունը ստանալու համար օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարին ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը և միջնորդությունը՝ օպերատիվ-

հետախուզական միջոցառումն անցկացնելու համար դատարան դիմելու վերաբերյալ: Միջնորդությունը և դրան կցվող նյութերը դատարան է ներկայացնում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով գաղտնի քննչական գործողություն կատարելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու համար սահմանված կարգով՝ հաշվի առնելով օպերատիվ-հետախուզական գործունեության՝ սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները (Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենք, 34-րդ հոդված, 2-րդ մաս):

Շարադրվածից պարզ դարձավ, որ ՕՀՄ անցկացնելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությունը դատարան կարող է ներկայացնել բացառապես ՕՀԳ իրականացնող մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալները:

Այսպես, պատկերացնենք իրավիճակ, երբ միջնորդություն ներկայացվում է ոչ թե ՀՀ ԱԱԾ տնօրենը կամ նրա տեղակալները, այլ՝ ՀՀ ԱԱԾ որևէ մարզի վարչության պետը, այսինքն՝ ոչ թե ՕՀԳ իրականացնող մարմնի ղեկավարը, այլ՝ օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը. արդյոք նման պայմաններում առկա՞ է խնդիր:

Օրենսդիրը հստակ տարանջատել է օպերատիվ ստորաբաժանման ղեկավար և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավար հասկացությունները: Օպերատիվ ստորաբաժանման ղեկավար կարող են լինել ՀՀ ԱԱԾ-ի տարբեր վարչությունների, դեպարտամենտների և բաժինների պետերը, իսկ ՕՀԳ իրականացնող մարմնի ղեկավարը մեկն է՝ ՀՀ ԱԱԾ տնօրենը, որն իր տեղակալների հետ ՕՀՄ-ների անցկացման (կամ ժամկետի երկարացման) միջնորդություն ներկայացնելու լիազորությամբ օժտված միակ սուբյեկտներն են:

Ընդ որում, նախկին իրավական կարգավորումներով տվյալ միջնորդությունը ներկայացնելու միակ պատշաճ սուբյեկտը բացառապես օպերատիվ մարմնի ղեկավարն էր, իսկ 01.07.2022թ. ուժի մեջ մտած ՀՕ-154-Ն օրենքով օրենսդիրը թեև որոշ չափով ընդլայնել է տվյալ միջնորդությունը դատարան ներկայացնելու սուբյեկտների շրջանակը՝ ՕՀԳ իրականացնող մարմնի ղեկավարից բացի նաև նրա տեղակալին օժտելով այդպիսի լիազորությամբ, սակայն կրկին վերահաստատել է իր դիրքորոշումն առ այն, որ ՕՀԳ իրականացնող մարմնի այլ աշխատակիցները, այդ թվում՝ օպերլիազորները և ստորաբաժանումների ղեկավարները այդպիսի միջնորդություն դատարան ներկայացնելու լիազորությունով օժտված չեն:

Այսպես, անդրադառնալով վերոնշյալ հարցին՝ կարող ենք արձանագրել հետևյալը. խնդիրն այն է, որ Ազգային անվտանգության ծառայությունը կազմված է նաև կենտրոնական և մարզային մարմիններից, որոնք օժտված են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրավասությամբ: Հարկ է նկատել նաև, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում օգտագործվում է նաև «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավար» հասկացությունը: Մի կողմից՝ ստացվում է իրավիճակ, որ որևէ իրավական ակտով սահմանված չէ, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու միջնորդությամբ դատարանին կարող է դիմել միայն ազգային անվտանգության հանրապետական կամ կենտրոնական մարմնի ղեկավարը, մյուս կողմից էլ հստակ արձանագրված է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կամ դրանց ժամկետի երկարաձգման համար դատարանի թույլտվությունը ստանալու համար օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարին ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը և միջնորդությունը:

Կարծում ենք, որ նման դեպքերում պետք է լինել ԱԱԾ միասնական համակարգ լինելու գաղափարից և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավար տերմինը մեկնաբանել առավել լայն առումով, ինչպիսի

պայմաններում էլ ընդունելի ենք համարում այն, որ ազգային անվտանգության մարզային մարմնի ղեկավարը, իր իրավասության սահմաններում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս, նույնպես իրավասու է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու միջնորդություն հարուցել դատարան:

3. Հաջորդ խնդիրը, որին կցանկանանք անդրադառնալ, վերաբերում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերի և փաստաթղթերի ոչնչացմանը:

Այսպես, ինչպես գիտենք, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված նյութերը և փաստաթղթերը ենթակա են ոչնչացման, որի կարգավորումն ամրագրված է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝

«1. Ուսումնասիրություն իրականացնելու և հայց հարուցելու նպատակով իրավասու մարմինն իրավունք ունի՝

5) իրական շահառուների, փոխկապակցված անձանց շրջանակը և գույքի ծավալը պարզելու նպատակով հանձնարարելու իրականացնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Սույն կետով սահմանված հանձնարարության հիման վրա չեն կարող իրականացվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումները» (Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ՀՀ օրենք, 11-րդ հոդված, 1-ին մաս, 5-րդ կետ):

Ինչպես այս, այնպես էլ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի մնացյալ հոդվածների ուսումնասիրությունը չի պարունակում որևէ նորմ տվյալների ոչնչացման մասով, ինչպես նաև այդ մասով չի պարունակում հղում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքին, իսկ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածը չի պարունակում հղում «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքին:

Ծիշտ է, առաջին հայացքից թվում է, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում տեղ գտած նորմը բլանկետային է, սակայն այն այնպիսի բլանկետային նորմ չէ, որ հնարավորություն ունենա տարածվելու նաև տվյալների ոչնչացման վրա, քանի որ նորմում հղումը օրենքին մասամբ է արված, հետևաբար՝ պետք է ենթակա լինի լրացման:

Տվյալների ոչնչացման կարևորության մասին է խոսել նաև ՄԻԵԴ-ը: Մասնավորապես՝ ՄԻԵԴ-ը փաստել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով՝ պետական մարմինների միջամտությունն անձնական կյանքի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքին թույլատրվում է այն դեպքում, երբ «նախատեսված է օրենքով»: Համաձայն ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի՝ այս ձևակերպումը ոչ միայն պահանջում է համապատասխանություն ներպետական օրենքին, այլև վերաբերում է օրենքի որակին՝ պահանջելով դրա համապատասխանությունն իրավական պետությանը: Հասարակական հսկողության բացակայության և իշխանությունը չարաշահելու վտանգի պատճառով պետական մարմինների կողմից հեռահաղորդակցության հսկողության և գաղտնալսման գաղտնի միջոցառումների համատեքստում ներպետական օրենսդրությունը պետք է ապահովի 8-րդ հոդվածով սահմանված իրավունքներին կամայական միջամտությունից անձի պաշտպանությունը: Հետևաբար՝ ներպետական օրենսդրությունը պետք է հստակ լուսաբանի պետական իրավասու մարմինների կողմից նման գաղտնի

միջոցառումների կիրառման հանգամանքներն ու պայմանները: Այլ խոսքով՝ օրենքը պետք է բավականաչափ հստակ լինի իր հասկացությունների մեջ՝ պատշաճ կերպով անձին մատնանշելով այն հանգամանքները, որոնց դեպքում հանրային իշխանություններն իրավասու են նման գաղտնի միջոցների դիմել: Ընդ որում, ՄԻԵԴ-ը մշակել է նվազագույն երաշխիքների շարք, որոնք պետք է սահմանվեն օրենսդրությամբ՝ լիազորությունների չարաշահումներից խուսափելու նպատակով. հանցագործությունների բնույթը, որոնք կարող են վերահսկման մասին որոշում կայացնելու հիմք լինել, մարդկանց այն կատեգորիաների սահմանում, որոնց հետախույնները կարող են ենթակա լինել գաղտնալսման, հեռախոսների գաղտնալսման ժամանակահատվածը, այն ընթացակարգը, որին պետք է հետևել ձեռք բերված տվյալների ուսումնասիրության, օգտագործման և պահպանման համար, կանխարգելիչ միջոցները, որոնք պետք է ձեռնարկել այդ տվյալներն այլ կողմերին հաղորդելու դեպքում, և այն հանգամանքները, որոնց դեպքում ձայնագրությունները կարող են կամ պետք է ջնջվեն կամ ժապավենները՝ ոչնչացվեն (*Վճռաբեկ դատարանի 2018 թվականի հունիսի 15-ին Սամվել Բաբայանի և մյուսների վերաբերյալ գործով թիվ ԵԿԴ/0189/01/17 որոշումը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիա. 04.11.1950թ.*):

4. Անդրադառնալով ևս մեկ, այն է՝ «Արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու եղանակների հետ կապված առաջացող խնդրին՝ հարկ ենք համարում փաստել, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արտաքին դիտումը առանց բնակարանի անձեռնմխելիության սահմանափակման հատուկ կամ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձանց հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքը վերահսկելն է բաց տարածությունում կամ հանրային վայրերում կամ բնակարան չհանդիսացող փակ տարածությունում **տեսաձայնագրման**, տեսագրման կամ լուսանկարման միջոցով էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա դիտման արդյունքների ամրագրմամբ» (Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենք, 21-րդ հոդված):

Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ներքին դիտումը հատուկ կամ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին բնակարանում հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքը վերահսկելն է տեսաձայնագրման, տեսագրման, **ձայնագրման** կամ լուսանկարման միջոցով կամ առանց դրանց՝ էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա դիտման արդյունքների ամրագրմամբ» (Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենք, 22-րդ հոդված):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արտաքին դիտումը, առանց բնակարանի անձեռնմխելիության սահմանափակման, հատուկ կամ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ անձանց հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքը վերահսկելն է բաց տարածությունում, հանրային վայրում կամ բնակարան չհանդիսացող փակ տարածությունում **տեսաձայնագրման**, տեսագրման, **ձայնագրման** կամ լուսանկարման միջոցով էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա դիտման արդյունքների ամրագրմամբ» (ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, 247-րդ հոդված):

Այսպես, պրակտիկայում բացառված չեն, ավելին՝ լինում են դեպքեր, երբ կատարվում է արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառում՝ ձայնագրման եղանակով, ինչը, սակայն, ամրագրված չէ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում, որը հաճախ տարընկալման տեղիք է տալիս՝ ընդհուպ ձեռք բերված ապացույցի անթույլատրելիության հարցի առաջացման:

Այսպես, կարծում ենք, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում ձայնագրումը որպես արտաքին դիտման կատարման եղանակ չամրագրելը օրենսդրական տեխնիկայի խնդիր է:

Այն պայմաններում, երբ արտաքին դիտումը հնարավոր է եղել կատարել ձայնագրմամբ այն չի կարող հանգեցնել ձեռք բերված ապացույցի անթույլատրելիության:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ տեսաձայնագրում եզրույթի բովանդակությունն առավել տարողունակ է, քան ձայնագրում եզրույթինը, հետևաբար, տեսաձայնագրման հնարավորության ամրագրումը կանխոշորում է ձայնագրման իրականացման հնարավորությունը:

Ավելին՝ ձայնագրումն իր բնույթով ավելի նվազ միջամտություն է անձի իրավունքներին, քան տեսաձայնագրումը, որը նախատեսված է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով:

Այլ կիներ իրավիճակը, եթե նախատեսված լիներ ձայնագրումը, սակայն կատարվեր տեսաձայնագրում, քանի որ վերջինս հետևանքի տեսանկյունից անձի իրավունքներին առավել խիստ միջամտություն է և չի կանխորոշում տեսաձայնագրման հնարավորություն:

Այսպիսով՝ կարծում ենք, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում ձայնագրումը որպես եղանակ հատուկ չներառելը չի բացառում դրա կատարման թույլատրելիությունը:

Եզրահանգումներ

1. Օպերատիվ տվյալն ինքնին չի կարող հիմք լինել անձի նկատմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու համար:

2. Պետք է գնահատման ենթարկել օպերատիվ տվյալի ստուգմանն ուղղված գործողությունների արդյունքում տվյալն այդ եղանակով ստուգելու հնարավորության ողջամտությունը:

3. Յուրաքանչյուր անգամ պետք է գնահատվի միջնորդությանը կցված փաստաթղթերի բովանդակությունը որակական առումով:

4. Ընդունելի ենք համարում այն, որ Ազգային անվտանգության մարզային մարմնի ղեկավարը, իր իրավասության սահմաններում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս, նույնպես իրավասու է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու միջնորդություն հարուցել դատարան:

5. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը չի պարունակում որևէ նորմ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված նյութերի և փաստաթղթերի ոչնչացման մասով, որը մեր կարծիքով ենթակա է լրացման:

6. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում ձայնագրումը որպես եղանակ չներառելը չի բացառում դրա կատարման թույլատրելիությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Ազգային ժողով. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք. 16.04.2020, ՀՕ-240-Ն
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=178778> :

2. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիա. 04.11.1950թ.
https://www.echr.coe.int/documents/d/echr/Convention_HYE :
3. ՀՀ Ազգային ժողով. «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք. 22.10.2007, ՀՕ-223-Ն
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=190391> :
4. ՄԻԵԴ. *Բիկովն ընդդեմ Ռուսաստանի որոշում*. գանգատ 4378/02
<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%22001-91704%22%7D> :
5. ՄԻԵԴ. *Կլասսն ընդդեմ Գերմանիայի որոշում*. գանգատ 5029/71
<https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%22001-57510%22%7D> :
6. ՀՀ Սահմանադրություն. 06.12.2015թ. <https://www.concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra>:
7. ՀՀ Ազգային ժողով. «ՀՀ քրեական դատավարության» օրենսգիրք. 30.06.2021, ՀՕ-306-Ն <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=195774>:
8. Սահմանադրական դատարան. ՍԴԴ-1526 որոշում. 28.04.2020թ.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142114>:
9. Սահմանադրական դատարան. ՍԴԴ-926 որոշում. 23.11.2010թ.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=63142>:
10. Վճռաբեկ դատարան. թիվ ԵԿԴ/0189/01/17 որոշում. 15.06.2018թ.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=127344> :
11. Goryainov K.K., Ovchinskii V.S., Sinilov G.K. eds. *Teoriya operativno-rozysknoi deyatel'nosti (Theory of operational-search activities)*. INFRA-M Publ Moscow, 2014.

WORKS CITED

1. «Apo'rini c'agum unecogh guyqi br'nagand'man masin» ՀՀ օրենք (AJH,16.04.2020,ՀՕ'-240-N) [The Law of the Republic of Armenia "On Confiscation of Property of Illegal Origin" (NA, 04/16/2020, ZR-240-N)]
2. «Mardu iravunqneri ev himnarar azatut'yunneri pashtpanut'yan masin» Evropakan konvencia (04.11.1950) [European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms (04.11.1950)]
3. «O'perativ hetaxuzakan gorc'uneut'yan masin» ՀՀ օրենք (AJ,22.10.2007,ՀՕ'-223-N) [The Law of the Republic of Armenia "On Operational Investigative activities" (NA, 22.10.2007, ZR-223-N)]
4. Bikovn y'nddem R'usastani MIED voroshum, gangat 4378/02 [The ECHR decision in the case of Bykov v. Russia, complaint 4378/02]
5. Klassn y'nddem Germaniayi MIED voroshum, gangat 5029/71 [The ECHR decision in the case of Class v. Germany, complaint 5029/71]
6. ՀՀ Սահմանադրություն (06.12.2015թ.) [The Constitution of the Republic of Armenia (06.12.2015)]
7. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (30.06.2021, zr-306-n) [The Criminal Procedure Code of the Republic of Armenia 30.06.2021, ZR-306-N)]
8. ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴԴ-1526 որոշում (28.04.2020) [The decision of the RA Constitutional Court SDO-1526 (04/28/2020)]
9. ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴԴ-926 որոշում (23.11.2010) [Decision of the RA Constitutional Court SDO-926 (11/23/2010)]
10. ՀՀ վճռաբեկ դատարանի EKD/0189/01/17 որոշում (15.06.2018թ.) [Decision EKD/0189/01/17of the RA Court of Cassation (June 15, 2018).

SOME PROBLEMS OF UNDERSTANDING AND INTERPRETING THE NORMS GOVERNING OPERATIONAL INVESTIGATIVE ACTIVITIES

MILENA HAYRAPETYAN

*Anti-Corruption Court of Appeal of the Republic of Armenia, Judge's assistant;
Yerevan State university, Faculty of law,
Chair of Criminal Procedure and Criminalistics, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the given article is to contribute to the formation of a unified practice in relation to certain issues raised in the article.

Problems such as filing a request for operational investigative activities only on the basis of operational data, destruction of data obtained as a result of operational investigative activities were analyzed.

The issue of the subject appropriate for submitting a petition for the implementation of operational investigative activities was also discussed.

The research was conducted using methods of synthesis, induction, deduction, as well as formal logical, comparative legal methods.

In the article we stated that the submission of a petition only on the basis of operational data, is unacceptable, but we should also take into account the lack of tools at this stage: regarding the problem of the subject submitting the petition, we found that the head of the regional Department of the National Security Council of the Republic of Armenia can also make a corresponding petition.

Regarding the destruction of data obtained as a result of operational investigative activities, we found that an addition needs to be made to the law "On Confiscation of Property of Illegal Origin".

We also touched upon the emerging problem related to the methods of conducting operational "investigative measures" appearance.

Keywords: *operational investigative activity, proper subject, operational data, external surveillance, illegal, certificate, protocol.*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПОНИМАНИЯ И ИНТЕРПРЕТАЦИИ НОРМ, РЕГУЛИРУЮЩИХ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНУЮ ДЕЯТЕЛЬНОСТЬ

МИЛЕНА АЙРАПЕТЯН

*помощник судьи апелляционного антикоррупционного суда Республики Армения,
аспирант кафедры уголовного судопроизводства и криминалистики
юридического факультета Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель представленного исследования – способствовать формированию единой практики в отношении определенных вопросов, поднятых в статье.

Были проанализированы такие проблемы, как подача ходатайства об оперативно-розыскной деятельности только на основе оперативных данных, уничтожение данных, полученных в результате оперативно-розыскной деятельности.

Также был рассмотрен вопрос о надлежащем субъекте для представления ходатайства об осуществлении оперативно-розыскной деятельности.

Исследование проводилось с использованием методов синтеза, индукции, дедукции, формально-логических, сравнительно-правовых методов.

Касаясь представления ходатайства только на основе оперативных данных, мы констатировали, что указанное неприемлемо, однако следует также учитывать нехватку инструментария на данном этапе: касаясь проблемы субъекта, подающего ходатайство, мы выяснили, что начальник областного управления СНБ РА также может выступить с соответствующим ходатайством.

В отношении уничтожения данных, полученных в результате оперативно-розыскной деятельности, мы пришли к выводу о том, что в закон «О конфискации имущества незаконного происхождения» необходимо внести дополнения.

Мы также затронули проблему, связанную с внешним наблюдением как одним из методов проведения оперативно-розыскных мероприятий.

Ключевые слова: *оперативно-розыскная деятельность, надлежащий субъект, оперативные данные, внешнее наблюдение, незаконный, справка, протокол.*